ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հաստատվել է՝

ԵՊԲՀ Գիտական խորհրդի

27.11.2013 թվականի թիվ 01 որոշմամբ,

Գիտական խորհրդի 25.03.2026 թվականի

թիվ 26-03-03-09 որոշմամբ հաստատվել է

նոր խմբագրությամբ

Ռեկտոր Ա.Ա.Մուրադյան

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) «Բարձրագույն կրթության կազմակերպման մասին» կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանվում են Համալսարանի բարձրագույն ուսումնական գործընթացների (այսուհետ՝ ուսումնական գործընթաց), այդ թվում դասընթացների կազմակերպման և իրականացման, ստուգարքների և քննությունների միջոցով Համալսարանի ուսանողների և կցագրված անձանց գիտելիքների ստուգման և այլ կանոնները:

2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կանոնադրությունը, այլ իրավական ակտեր:

3. Սույն կանոնակարգի հիման վրա Համալսարանի ռեկտորն արձակում է ուսումնական ընթացակարգային հրամաններ: Սույն կանոնակարգի և ռեկտորի հրամանների հիման վրա Համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորն արձակում է ուսումնական ընթացակարգային գրավոր կարգադրություններ և

հանձնարարագրեր:

Հոդված 2. Բարձրագույն կրթության գործընթացը

1. Համալսարանում բարձրագույն կրթությունն իրականացվում է առկա կրթության ձևաչափով՝ առողջապահական բնագավառի հետևյալ մասնագիտություններով.

1) «Բուժական գործ»,

2) «Բուժական գործ զինված ուժերում»,

3) «Ստոմատոլոգիա»,

4) «Ֆարմացիա»,

5) «Հանրային առողջություն և առողջապահություն»:

Համալսարանում կազմակերպվում է նաև «Բիզնես վարչարարություն» մասնագիտությամբ առողջապահության բնագավառին առնչվող մագիստրոսական կրթական ծրագիրը:

2. «Բուժական գործ» մասնագիտությամբ կրթությունը կազմակերպվում է անընդհատ և ինտեգրված բարձրագույն բժշկական կրթական ծրագրով:

«Բուժական գործ» մասնագիտությամբ անընդհատ և ինտեգրված բարձրագույն բժշկական կրթական ծրագրի ժամկետը 6 ուսումնական տարի է, որի ամփոփիչ ատեստավորման դրական արդյունքների հիման վրա շրջանավարտին շնորհվում է «Բժիշկ» որակավորումը:

3. «Բուժական գործ զինված ուժերում» մասնագիտությամբ կրթությունը կազմակերպվում է անընդհատ և ինտեգրված բարձրագույն բժշկական կրթական ծրագրով:

«Բուժական գործ զինված ուժերում» մասնագիտությամբ անընդհատ և ինտեգրված բարձրագույն բժշկական կրթական ծրագրի ժամկետը 6 ուսումնական տարի է, որի ամփոփիչ ատեստավորման դրական արդյունքների հիման վրա շրջանավարտին շնորհվում է «Բժիշկ» որակավորումը:

4. «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ կրթությունը կազմակերպվում է անընդհատ և ինտեգրված բարձրագույն բժշկական կրթական ծրագրով:

«Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ անընդհատ և ինտեգրված բարձրագույն բժշկական կրթական ծրագրի ժամկետը 5 ուսումնական տարի է, որի ամփոփիչ ատեստավորման դրական արդյունքների հիման վրա շրջանավարտին շնորհվում է «Բժիշկ-ստոմատոլոգ» որակավորումը:

5. «Ֆարմացիա» մասնագիտությամբ կրթությունն իրականացվում է բակալավրի և մագիստրոսի բարձրագույն կրթական ծրագրերով:

«Ֆարմացիա» մասնագիտությամբ բակալավրի կրթական ծրագրի ժամկետը 4 ուսումնական տարի է, որի ամփոփիչ ատեստավորման դրական արդյունքների հիման վրա շրջանավարտին շնորհվում է «Ֆարմացիայի բակալավր» որակավորումը:

«Ֆարմացիա» մասնագիտությամբ մագիստրոսի կրթական ծրագրի ժամկետը 1 ուսումնական տարի է, որի ամփոփիչ ատեստավորման դրական արդյունքների հիման վրա շրջանավարտին շնորհվում է «Ֆարմացիայի մագիստրոս» որակավորումը:

6. «Հանրային առողջության և առողջապահության» մասնագիտություններով կրթությունն իրականացվում է մագիստրոսի բարձրագույն կրթական ծրագրերով:

«Հանրային առողջության և առողջապահության» մասնագիտությունով մագիստրոսի կրթական ծրագրերի ժամկետը 1.5 ուսումնական տարի է, որի ամփոփիչ ատեստավորման դրական արդյունքների հիման վրա շրջանավարտին շնորհվում է «Հանրային առողջության մագիստրոս» որակավորումը:

7. «Բիզնես վարչարարության» մասնագիտությամբ կրթությունն իրականացվում է մագիստրոսի բարձրագույն կրթական ծրագրով:

«Բիզնես վարչարարության» մասնագիտությամբ մագիստրոսի «Բուժհաստատությունների կառավարում» կրթական ծրագրի ժամկետը 1 ուսումնական տարի է, որի ամփոփիչ ատեստավորման դրական արդյունքների հիման վրա շրջանավարտին շնորհվում է «Բիզնես վարչարարության մագիստրոս» որակավորումը:

8. Առողջապահական բնագավառի և այլ մասնագիտությունների կրթության ձևերը և ժամկետները սահմանվում է Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ:

9. Բարձրագույն կրթությունը կազմակերպվում է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

10. Համալսարանում կրթությունը կազմակերպվում է ակադեմիական ինքնավարության և Համալսարանի իրավասությունների շրջանակներում:

11. Համալսարանն ինքնուրույն է սահմանում և իրականացնում ուսանողների ատեստավորման ձևերը և կարգը՝ ելնելով յուրաքանչյուր տարվա ուսումնական պլանից:

12. Համալսարանը կրթության կազմակերպումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մասնագիտությունների պատշաճ որակավորում ապահովող կրթական ծրագրերով: Ուսումնառության

ընթացքում Համալսարանը ստեղծում և ապահովում է ուսումնական գործընթացն ապահովող բոլոր հնարավոր պայմանները:

13. Ուսումնառությունն ավարտելու և ամփոփիչ ատեստավորումն անցնելու դեպքում Համալսարանն ուսանողին շնորհում է համապատասխան մասնագիտությամբ որակավորման դիպլոմ:

14. Արտակարգ կամ չնախատեսված այլ պայմաններում բարձրագույն կրթությունը կարող է կազմակերպվել հեռավար կարգով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

15. Համալսարանն իրավասու է «ԵՊԲՀ սովորողների ներքին կարգապահական» կանոնակարգով սահմանված կարգով ուսանողի նկատմամբ կիրառելու կարգապահական պատասխանատվության միջոցներ, ընդհուպ մինչև ուսանողին Համալսարանից հեռացնելը:

16. Ուսանողները պարտավոր են կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և Համալսարանի կանոնակարգերով սահմանված պարտականությունները:

17. Ուսանողները պարտավոր են մասնակցել սույն կանոնակարգով սահմանված նվազագույն ժամաքանակի դասընթացներին:

18. Ուսումնառության ընթացքում ատեստավորման գործընթացներում ուսանողը պետք է հաղթահարի (ունենա) սահմանված նվազագույն շեմի գիտելիքները:

19. Ուսանողը պարտավոր է Համալսարանի կանոնակարգ(եր)ով և կրթության մասին պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում վճարելու ուսման վճարը:

Ուսանողն իրավունք ունի ուսման վարձը վճարել ուսումնական տարվա որոշակի բաժանված ժամկետներում, ամիսներին՝ Համալսարանի «Ուսման վճարի չափերի մասին» կանոնակարգով և կրթության մասին պայմանագրով նախատեսված պայմաններով:

20. Ուսանողը պարտավոր է մինչև կրթության մասին պայմանագրի կնքումը և ուսումնառության ընթացքում ծանոթանալու ուսանողական իրավունքներին և պարտականություններին, Համալսարանի ներքին կարգապահական կանոններին, ուսումնական գործընթացը կարգավորող այլ իրավական ակտերին:

21. Ուսանողը պարտավոր է հետևել Համալսարանի ներքին կարգապահական կանոններին, այդ թվում Համալսարանում գործող՝ ծխելու, դասերի և գիտելիքների

ստուգման գործընթացներում տեխնիկական և չարտոնված այլ միջոցներից օգտվելու արգելքի կանոններին:

22. Ուսանողն իրավունք ունի մասնակցելու համալսարանական կրթական, հետազոտական ծրագրերին, գիտաժողովներին, սեմինարներին և համալսարանական այլ միջոցառումների:

23. Ուսանողն իրավունք ունի ստանալու ուսման վարձի փոխհատուցում (զեղչ)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Համալսարանի կանոնակարգով սահմանված կարգով:

Հոդված 3. Ուսումնական տարի

1. Համալսարանում բարձրագույն կրթության ուսումնական գործընթացը կազմակերպվում է դասընթացների և գիտելիքների ստուգման միջոցով՝ սահմանված ուսումնական տարիների ընթացքում:

2. Ուսումնական տարին ներառում է երկու կիսամյակ՝ տասներկու ամսվա ընթացքում, յուրաքանչյուր կիսամյակի ավարտին արձակուրդի օրերով՝ ռեկտորի կողմից սահմանված ժամկետներում:

3. Ուսումնական գործընթացի առաջին և երկրորդ կիսամյակների դասընթացները մեկնարկում են ռեկտորի հրամանով սահմանված ժամկետներում, որպես կանոն՝ առաջին կիսամյակը սեպտեմբերի, երկրորդ կիսամյակը՝ փետրվարի սկզբին:

4. Առաջինից երրորդ կուրսերում՝ առաջին և երկրորդ կիսամյակների դասընթացների ավարտին կազմակերպվում է գիտելիքների ստուգման գործընթաց: Գիտելիքների ստուգման գործընթացը ներառվում է կիսամյակի ժամկետի մեջ:

5. Յուրաքանչյուր կիսամյակի համար ռեկտորի հրամանով սահմանվում է տվյալ կիսամյակում նախատեսված քննաշրջանի (ներառյալ մարման երկու փուլերը) ժամանակացույցը:

6. Ոչ ցիկլային ձևաչափով դասավանդվող առարկաների դասընթացները կազմակերպվում են կիսամյակի ընթացքում, իսկ ատեստավորումները՝ քննաշրջանում:

Ոչ ցիկլային ձևաչափով դասավանդվող առարկաների դասընթացները մեկնարկում է 9.30-ին և ավարտվում՝ դասացուցակով նախատեսված դասերի ավարտին համապատասխանող ժամին: Դասընթացները Համալսարանի կլինիկական բազաներում իրականացվելու դեպքերում դասընթացի մեկնարկի և ավարտի ժամերը որոշվում են Համալսարանի մանդատային հանձնաժողովի կողմից:

7. Ցիկլային ձևաչափով դասավանդվող դասընթացները կազմակերպվում են մեկից չորս շաբաթ տևողությամբ:

Ատեստավորումը կազմակերպվում է ցիկլային դասընթացի վերջին օրը, իսկ վերահանձնումները՝ ռեկտորի հրամանով սահմանված մարման շրջան(ներ)ում:

Ցիկլային ձևաչափով դասավանդվող առարկաների առաջին հերթի դասընթացները մեկնարկում է 9.00-ին և ավարտվում՝ ժամը 13.00-ին, երկրորդ հերթի դասընթացները մեկնարկում է 13.30-ին, ավարտվում՝ ժամը 17.30-ին: Առանձին դեպքերում սահմանվում են այլ մեկնարկի և ավարտի ժամեր:

8. Մեկ դասաժամի տևողությունը 80 րոպե է, որը ներառում է երկու ակադեմիական ժամ: Դասաժամին հետևում է սահմանված ժամաչափերով ընդմիջում:

9. Ուսանողի գիտելիքների ստուգման գործընթացի դրական ավարտից հետո, հաջորդ կիսամյակի մեկնարկին համապատասխան ֆակուլտետի դեկանի կողմից արձակվում է ուսանողների հաջորդ կուրս տեղափոխման մասին կարգադրություն, որը հաստատվում է Համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից:

Հոդված 4. Ուսումնական գործընթացում ուսանողի բացակայությունների մասին

1. Ուսումնական պլանով տվյալ առարկային հատկացված կրեդիտն ուսանողին տրվում է կիսամյակի ընթացքում դասախոսություններին, գործնական դասընթացների պարտադիր ժամաքանակին մասնակցելու, ինքնուրույն աշխատանք կատարելու և ատեստավորվելու դեպքում:

2. Կիսամյակի ընթացքում ոչ ցիկլային ձևաչափով դասավանդվող առարկային հատկացված լսարանային (գործնական դասընթացներ և դասախոսություններ) ժամաքանակի 20 տոկոսից ավելի բացակայության դեպքում (անկախ պատճառից)՝ տվյալ առարկայի ուսումնական ծրագիրն ուսանողի կողմից չյուրացնելու հիմքով՝ քննաշրջանում (ներառյալ մարման երկու փուլերը) ուսանողին չի թույլատրվում մասնակցել տվյալ առարկայի ստուգարքին կամ քննությանը:

3. Կիսամյակի ընթացքում (ոչ ցիկլային) ձևաչափով դասավանդվող մոդուլին (բոլոր առարկայական բաղադրիչները միասին) հատկացված լսարանային (գործնական դասընթացներ և դասախոսություններ) ժամաքանակի 20 տոկոսից ավելի բացակայության դեպքում (անկախ պատճառից)՝ տվյալ մոդուլի ուսումնական ծրագիրն

ուսանողի կողմից չյուրացնելու հիմքով՝ քննաշրջանում (ներառյալ մարման երկու փուլերը) ուսանողին չի թույլատրվում մասնակցել տվյալ մոդուլի ստուգարքին կամ քննությանը:

4. Կիսամյակի ընթացքում ցիկլային ձևաչափով ուսումնասիրվող մոդուլներից գումարային՝

1) 60-ից 70 ժամ անհարգելի բացակայության դեպքում ուսանողին ռեկտորի հրամանով հայտարարվում է գրավոր *«**Նախազգուշացում**»*,

2) 71-ից 100 ժամ անհարգելի բացակայության դեպքում ուսանողին ռեկտորի հրամանով հայտարարվում է գրավոր *«**Նկատողություն**»*,

3) 101 ժամ և ավելի անհարգելի բացակայության դեպքում ուսանողը ենթակա է Համալսարանից *«**Հեռացման**»:*

5. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված 20 տոկոս բացակայությունների առավելագույն թույլատրելի սահմանը գերազանցելուց հետո ուսանողը ենթակա է Համալսարանից հեռացման, բացակայությունների ցանկացած պատճառաբանության դեպքում, այդ թվում առողջական խնդիրներով պատճառների:

Առանձին դեպքերում՝ 20 տոկոս բացակայությունների ժամկետը գերազանցող ժամկետով առողջական խնդիրներ ունենալու դեպքում ուսանողը կարող է ներկայացնել ակադեմիական արձակուրդ ձևակերպելու համար անհրաժեշտ փաստաթղթեր:

Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության ծանուցագրերով միջոցառումներին մասնակցելու պատճառով՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված 20 տոկոս բացակայությունների ժամկետը գերազանցելու դեպքերում Համալսարանի մանդատային հանձնաժողովի (այսուհետ՝ Մանդատային հանձնաժողով) կողմից, որպես բացառություն, կայացվում է իրավիճակից բխող ողջամիտ որոշում(ներ):

6. Ռազմաբժշկական ֆակուլտետում սովորող կուրսանտը՝ կիսամյակային (ոչ ցիկլային) և ցիկլային ձևաչափով դասընթացներից գումարային 30 ժամ անհարգելի բացակայելու դեպքում ենթակա է Համալսարանից հեռացման:

Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության պատվերով (ՊՆՊ, պատիվ ունեմ ծրագիր) սովորող ուսանողը՝ կիսամյակային (ոչ ցիկլային) և ցիկլային ձևաչափով դասընթացներից գումարային 32 ժամ անհարգելի բացակայելու դեպքում ենթակա է Համալսարանից հեռացման:

7. Ցիկլային ձևաչափով ուսումնասիրվող առարկաների դասընթացներից բացակայած օրերը լրացվում են հետևյալ կանոններով՝

1) Մեկ շաբաթ տևողությամբ առարկայի դասընթացներից 1 օր բացակայությունը

լրացվում է.

2) Երկուսից երեք շաբաթ տևողությամբ առարկայի դասընթացներից 1 օր բացակայությունը չի լրացվում, իսկ մեկից ավելի բացակայած օրերը լրացվում են.

3) Չորս և ավելի շաբաթ տևողությամբ առարկայի դասընթացներից 2 օր բացակայությունը չի լրացվում, իսկ երկուսից ավելի բացակայած օրերը լրացվում են.

4) Մոդուլի յուրաքանչյուր դասընթացից բաց թողնված օրերը լրացվում են սույն մասի 1-ից 3-րդ կետերով սահմանված կանոններով.

5) Հանրային առողջության ֆակուլտետի մագիստրոսական կրթական ծրագրերի ուսումնական ցիկլերի ընթացքում դասերից բացակայելու դեպքում ուսանողին չի թույլկատրվում գիտելիքների ստուգման գործընթացին: Այս դեպքում ուսանողը գիտելիքների ստուգման գործընթացին կարող է մասնակցել առաջին մարման շրջանում բաց թողնված դասերը սահմանված ժամանակահատվածում լրացնելուց հետո: Հարգելի են համարվում սույն կանոնակարգի 6 հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքերի բացակայությունները:

8. Ցիկլային ձևաչափով դասընթացներից բացակայած օրերը լրացնելուց հետո ուսանողը թույլատրվում է ատեստավորման՝ մարման շրջանում:

9. Ցիկլային ձևաչափով ուսումնասիրվող առարկաներից գումարային մինչև 100 ժամ հարգելի (սույն կանոնակարգի 6 հոդվածի 8-րդ մասով սահմանված հանգամանքների դեպքում) բացակայության դեպքում ուսանողին հնարավորություն է տրվում բացակայած օրերը լրացնել Համալսարանի միջոցների հաշվին, իսկ անհարգելի բացակայության դեպքում վճարովի հիմունքներով՝ համաձայն ռեկտորի հրամանով սահմանված ժամանակացույցի:

10. Ուսանողն իրավունք ունի մարման շրջանում քննությունը հանձնել մեկ կամ երկու անգամ, եթե թույլ են տալիս մարման ժամկետները: Ավարտական կուրսի 2-րդ կիսամյակում ուսումնական պլանով նախատեսված առարկաներից բացակայությունները լրացվում են կիսամյակի ընթացքում՝ ռեկտորի հրամանով սահմանված ժամանակացույցով, մինչև ամփոփիչ ատեստավորումը՝ օգտվելով քննությունը մեկ կամ երկու անգամ հանձնելու իրավունքից, եթե թույլ են տալիս ժամկետները: Սահմանված ժամկետում չլրացնելու դեպքում ուսանողը ենթակա է Համալսարանից հեռացման:

Ցիկլային ձևաչափով դասավանդվող առարկաներից 101 և ավելի ժամ բացակայություն ունեցող ուսանողները հեռացվում են համալսարանից կամ համա-

պատասխան փաստաթղթերի առկայության դեպքում՝ ուսանողի ցանկությամբ ձևակերպվում է ակադեմիական արձակուրդ:

11. Ուսումնական պլանով նախատեսված երկու և ավելի առարկայական բաղադրիչից կազմված ցիկլային ձևաչափով ուսումնասիրվող առարկայից բացակայած ուսանողը լրացնում է միայն համապատասխան բաղադրիչից բացակայած օրերը:

12. Առաջինից երրորդ կուրսերում բազմաբաղադիչ ձևաչափով ուսումնասիրվող առարկաներից հարցման օրը բացակայած ուսանողին չի թույլատրվում հարցումը հանձնել այլ ժամկետներում: Բացառիկ և արտակարգ պատճառով ուսանողի կողմից բացակա ունենալու դեպքում Մանդատային հանձնաժողովի կողմից կայացվում է իրավիճակից բխող ողջամիտ որոշում:

Հոդված 5. Միջին որակական գնահատական և առաջադիմություն

1. Սույն հոդվածով օգտագործվող հապավումներն ունեն հետևյալ հասկացությունները.

1) **ՄՈԳ**՝ միջին որակական գնահատական:

2) **ՎՄ**՝ «Վարկանիշային միավոր»՝ բոլոր գնահատված կրեդիտների և դրանց համապատասխանող գնահատականների արտադրյալների գումար:

3) **ԳԿ**՝ «Գնահատված կրեդիտ»՝ գումարային կրեդիտների մաս, որը գնահատված է տարբերակված գնահատականներով:

2. Ուսումնառության ընթացքում ուսանողները ձևավորում են ՄՈԳ, որը Համալսարանում ուսումնառության ընթացքում գնահատականների կրեդիտներով կշռված միջինացված ցուցանիշ է և հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ)՝ ՄՈԳ=ՎՄ/ԳԿ:

3. ՄՈԳ-ը արտացոլում է տվյալ կրթական ծրագրի բոլոր դասընթացների կամ ուսումնական մոդուլների կրեդիտները, որոնք ավարտվում են քննությամբ և տարբերակված ստուգարքով:

4. Ուսանողի առաջադիմությունը որոշվում է սույն կանոնակարգով սահմանված ՄՈԳ-ի նվազագույն սահմաններով:

5. Ուսանողի առաջադիմության ՄՈԳ-ը հաշվարկվում է ուսումնական տարվա արդյունքներով, իսկ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ ամբողջ ուսումնառության տարիների վերջնարդյունքով:

6. Ուսանողի ոչ բավարար առաջադիմության ցուցանիշ է համարվում՝ մեկ ուսումնական տարվա ավարտի արդյունքներով՝ ուսանողի կողմից ՄՈԳ-ի մինչև 50 տոկոս շեմի առկայությունը:

7. Ուսանողի բավարար առաջադիմության ցուցանիշ է համարվում՝ մեկ ուսումնական տարվա ավարտի արդյունքներով՝ ուսանողի կողմից ՄՈԳ-ի 50-ից 69 տոկոս շեմի առկայությունը:

8. Ուսանողի լավ առաջադիմության ցուցանիշ է համարվում՝ մեկ ուսումնական տարվա ավարտի արդյունքներով՝ ուսանողի կողմից ՄՈԳ-ի 70-ից 79 տոկոս շեմի առկայությունը:

9. Ուսանողի բարձր առաջադիմության ցուցանիշ է համարվում՝ մեկ ուսումնական տարվա ավարտի արդյունքներով՝ ուսանողի կողմից ՄՈԳ-ի 80-ից 89 տոկոս շեմի առկայությունը:

10. Ուսանողի գերազանց առաջադիմության ցուցանիշ է համարվում՝ մեկ ուսումնական տարվա ավարտի արդյունքներով՝ ուսանողի կողմից ՄՈԳ-ի 90 տոկոս շեմի հաղթահարումը (գերազանցումը):

Հոդված 6. Ուսանողների գիտելիքների ստուգման գործընթացը

1. ***Գիտելիքների ստուգման գործընթացի իրավական հիմքերը***

1) Կիսամյակի ընթացքում դրական գնահատականների կամ գրավոր (թղթային) թեստային աշխատանքի դրական արդյունքի դեպքում ուսանողը ստանում է ստուգարք՝ համաձայն Համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի 2015 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ 02-36/128 կարգադրության:

2) Ստուգարք չստացած կամ ստուգարքին չներկայացած ուսանողին հնարավորություն է տրվում այն հանձնել միայն մարման շրջան(ներ)ում:

3) Բոլոր կրթական ծրագրերով ուսումնասիրվող, բանավոր ձևով ատեստավորվող առարկաների քննությունները կազմակերպվում են Համալսարանի «Բանավոր քննությունների անցկացման» կանոնակարգին համապատասխան:

4) Ուսանողների ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է Համալսարանի «Ամփոփիչ ատեստավորման կազմակերպման և անցկացման» կանոնակարգին համապատասխան:

2. ***Գիտելիքների ստուգման անբավարար արդյունքը***

1) Անբավարար առաջադիմություն ցուցաբերելու դեպքում ուսանողները, բացառությամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունք ունեցողների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության պատվերով սովորող ուսանողների և կուրսանտների, իրավունք ունեն մինչև ավարտական ուստարվա սկիզբը լրացնելու առավելագույնը 12 կրեդիտ կազմող առարկաների ակադեմիական պարտքերը, առարկաները վերահանձնելով ևս 2 անգամ (ցանկության դեպքում կրկնելով այդ առարկաների դասընթացների մասնակցությունը)՝ «Ակադեմիական պարտքերի լրացման» կանոնակարգին համապատասխան:

2) Պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունք ունեցող ուսանողը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության պատվերով սովորող ուսանողը և կուրսանտը քննաշրջանի (ներառյալ մարման շրջանները) ավարտին նույնիսկ մեկ առարկայից անբավարար առաջադիմություն ցուցաբերելու դեպքում ենթակա է Համալսարանից հեռացման:

3) Բոլոր կուրսերի ուսանողները՝ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված առարկաների (ինչպես նաև Մանդատային հանձնաժողովի կողմից որոշվող այլ առարկաների) ցանկում չընդգրկված առարկաներից որևէ մեկից 2-րդ մարման շրջանում անբավարար առաջադիմություն ցուցաբերելու դեպքում, հեռացվում են Համալսարանից:

3. ***Մինչև 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի կուտակման հնարավորությունը***

1) Հաշվի առնելով առարկաների շարունակականության սկզբունքը, սահմանվում է առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի կուտակման հնարավորությունը հետևյալ առարկաների մասով՝

– Ակադեմիական հայերեն,
– Ակադեմիական անգլերեն,
– Առողջապահական իրավունք,
– Բարձրագույն մաթեմատիկա և բժշկական ինֆորմատիկա,
– Բժշկական կենսաբանություն,
– Բժշկական հոգեբանություն,
– Բժշկական քիմիա,
– Բժշկական ֆիզիկա,
– Բժշկության պատմություն,

– Բիոէթիկա,

– Հայ ժողովրդի պատմություն,

– Հայկական քաղաքակրթության պատմություն և բժշկության պատմություն,

– Հայոց լեզու,

– Ռուսերեն,

– Փիլիսոփայություն,

– Քաղպաշտպանություն,

– Օտար լեզու,

– Ֆարմացիայի պատմություն:

2) Համալսարանի մանդատային հանձնաժողովը իրավասու է յուրաքանչյուր ուստարում վերանայել սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված առարկաների ցանկը՝ ելնելով ծրագրային փոփոխություններով պայմանավորված անհրաժեշտություններից:

4. ***Քննությունների և ստուգարքների ընթացակարգային պահանջները***

Ուսանողների քննություններն ու ստուգարքները կազմակերպվում են ընթացակարգային հետևյալ պահանջներին համապատասխան՝

1) Ուսանողը քննությունները հանձնում է բանավոր, համակարգչային և գրավոր, թեստային եղանակով՝ գնահատվելով 10 բալային համակարգով, որտեղ 5-ից 6 բալը համապատասխանում է բավարար, 7-ից 8 բալը՝ լավ, 9-ից 10 բալը՝ գերազանց գնահատականներին:

2) Հանրային առողջության ֆակուլտետում ուսանողների գիտելիքների գնահատումը կատարվում է «Հանրային առողջության ֆակուլտետի առարկաների գնահատման» կանոնակարգին համապատասխան:

3) Ամբիոնները յուրաքանչյուր կիսամյակում նորացնում և համալրում են թեստային բազան՝ առնվազն 10 տոկոսի չափով:

4) Ստուգարքային և քննական առարկաների թեստային յուրաքանչյուր տարբերակ պարունակում է 50 թեստ:

5) Դրական գնահատականի շեմը 26 ճիշտ պատասխանն է: Բազմաբաղադրիչ ձևաչափով գնահատվող առարկաների դեպքում գնահատումն իրականացվում է ըստ Համալսարանի Ուսումնամեթոդական խորհրդի կողմից տվյալ առարկայի համար հաստատված սանդղակի:

6) Ոչ ցիկլային ձևաչափով ուսումնառվող որոշ առարկաներից (որոնք չեն

ուսումնառվում բազմաբաղադրյալ համակարգով և ընդգրկված չեն սույն կանոնակարգի 6-րդ հոդվածի 6-րդ մասի 5-րդ կետում)՝ յուրաքանչյուրից կիսամյակի դասընթացների ժամանակ ուսանողի կողմից 5 անգամ դրական պատասխան (0.5 միավոր) ունենալու դեպքերում՝ ուսանողին հնարավորություն է տալիս քննության կամ ստուգարքի արդյունքում վերջնական գնահատականը ձևավորելիս՝ 25 և ավելի ճիշտ պատասխանների դեպքում ավելացնել 0.5 միավոր (բոնուս):

7) «Բուժական գործ» կրթական ծրագրում և «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ 2025-2026 ուստարվանից ընդունված սովորողների մոդուլային ձևաչափով ուսումնառության վերջնարդյունքների ատեստավորումն իրականացվում է հետևյալ սկզբունքներով.

ա. Յուրաքանչյուր մոդուլում կարող են ընդգրկվել մի քանի դասընթացներ: Մոդուլում ընդգրկված առարկայական դասընթացները հիմնականում գնահատվում են՝ ըստ ընթացիկ գործնական՝ 20 տոկոս և գիտելիքների թեստային ձևաչափով քննական՝ 80 տոկոս արդյունքների: Համալսարանի Ուսումնամեթոդական խորհրդի կողմից հաստատված առանձին մոդուլների գործնական և թեստային գնահատման բաղադրիչների համամասնությունը սահմանվում է՝

- 40-ը 60 տոկոսի հարաբերակցությամբ,
- 30-ը 70 տոկոսի հարաբերակցությամբ,
- 50-ը 50 տոկոսի հարաբերակցությամբ:

բ. Առանձին դեպքերում բաղադրիչը կարող է ներկայացված լինել միայն դասախոսություններով և գնահատվել մոդուլում առկա այլ բաղադրիչի հետ՝ թեստային ձևաչափով քննական արդյունքի հիման վրա:

գ. Ուսանողը մոդուլի քննությունը հանձնում է մոդուլը կազմող բոլոր առարկաների ուսումնառությունից հետո:

դ. Մոդուլի առարկայական բաղադրիչների հարցերի քանակը թեստային քննական տարբերակում սահմանվում է ըստ այդ բաղադրիչների կրեդիտային արժեքների:

ե. Մոդուլի վերջնական գնահատականը ձևավորվում է դասընթացների գործնական և թեստային դրական արդյունքների գումարի ամբողջացմամբ, որտեղ գործնական բաղադրիչը ձևավորվում է ըստ սույն հոդվածի 3-րդ բանաձևի:

Թեստային և բանավոր ձևաչափով գնահատումն իրականացվում է համաձայն Համալսարանի Ուսումնամեթոդական խորհրդի կողմից հաստատված սանդղակի:

զ. Թեստային քննության անցողիկ միավորների շեմը չհաղթահարելու դեպքում, քննությունը վերահանձնվում է մարման շրջաններում՝ քննական տարբերակներում պահպանելով բոլոր բաղադրիչների համամասնական ընդգրկվածությունը: Մարման շրջաններում պահպանվում են բաղադրիչների գործնական ունակություններից ուսանողի կողմից ձևավորած միավորները:

Սույն մասով սահմանված չորս առարկայական բաղադրիչից կազմված մոդուլի գնահատումն իրականացվում է համաձայն հետևյալ օրինակների և քայլերի.

Քայլ 1. Որոշվում է մոդուլի քննական թեստային տարբերակում առարկայական բաղադրիչների հարցերի քանակը՝ ըստ մոդուլում առարկայի կրեդիտային արժեքի՝ համաձայն հետևյալ բանաձևի՝

ԲԱՆԱՁԵՎ 1

$$\textbf{Բաղադրիչի հարցերի քանակ} = \frac{\text{Առարկայի կրեդիտ}}{\text{Մոդուլի կրեդիտ}} \times \mathbf{50}$$

Եթե մոդուլն ունի 7 կրեդիտ, իսկ առարկայական բաղադրիչներինը՝ համապատասխանաբար 2 կրեդիտ, 2 կրեդիտ, 1.5 կրեդիտ, 1.5 կրեդիտ, ապա մոդուլի առարկայական բաղադրիչների հարցերի քանակը կլինի համապատասխանաբար՝ 14, 14, 11, 11 հարց:

Քայլ 2. Իրականացվում է մոդուլի առարկայական բաղադրիչների գործնական ունակություններից ստացած գնահատականների հաշվարկ, ըստ մոդուլում առարկայի տեսակարար կշռի՝ համաձայն հետևյալ բանաձևի՝

ԲԱՆԱՁԵՎ 2

$$\textbf{Բաղադրիչի գործնական գնահատական} = \frac{\text{Առարկայի կրեդիտ}}{\text{Մոդուլի կրեդիտ}} \times \text{Բաղադրիչի գործնականից ուս. ձեռքբերած միավոր}$$

Օրինակ. 7 կրեդիտ ունեցող մոդուլում ուսանողի կողմից ձեռքբերած գարծնական բաղադրիչների միավորները և ըստ բանաձև 2-ի հաշվարկված գնահատականները՝

Բաղադրիչ 1 - 2 կրեդիտ՝ 1.5 միավոր, գնահատականը՝ 0.43,

Բաղադրիչ 2 - 2 կրեդիտ՝ 1.0 միավոր, գնահատականը՝ 0.29,

Բաղադրիչ 3 - 1.5 կրեդիտ՝ 1.8 միավոր, գնահատականը՝ 0.39,

Բաղադրիչ 4 - 1.5 կրեդիտ՝ 1.6 միավոր, գնահատականը՝ 0.34:

Քայլ 3. Գումարվում են մոդուլի չորս առարկաների գործնական բաղադրիչների գնահատականները և ստացվում է մոդուլի գործնական ունակությունների ընդհանուր գումարային գնահատականը՝

0.43+0.29+0.39+0.34=1.45 (մոդուլի գումարային գործնական գնահատական):

Քայլ 4. Մոդուլի վերջնական գնահատականը ձևավորվում է բոլոր բաղադրիչների գումարային գործնական գնահատականի (տվյալ օրինակում՝ 1.45) և թեստային քննության գումարային դրական գնահատականի գումարի ամբողջացումով:

ԲԱՆԱՁԵՎ 3

Մոդուլի գնահատական = ΣԲաղադրիչների գործնական գնահատական + ΣԲաղադրիչների թեստային դրական գնահատական

Օրինակ. Քննական թեստային գնահատական՝ 39 ճիշտ պատասխան X 0.16 (1 թեստի արժեք) = 6.24

Մոդուլի վերջնական գնահատական՝ 1.45 + 6.24 = 7.69 = **8.0**

8) Ժամկետային զինվորական ծառայությունից, ակադեմիական արձակուրդից վերադարձած և կցագրման, վերականգնման ենթակա ուսանողները ազատվում են «Կմախքամկանային համակարգ 1 և 2» մոդուլի «Մարդու անատոմիա» բաղադրիչի ուսումնառությունից և ատեստավորումից՝ նախկինում «Մարդու անատոմիա» առարկան ուսումնառած և ատեստավորված լինելու հիմքով, իսկ «Կլինիկական անատոմիա» բաղադրիչն ուսումնառում և ատեստավորվում են, որպես առարկայական տարբերություն: Այս դեպքում նշված մոդուլի ատեստավորման վերջնական գնահատականը ձևավորվում է՝ համաձայն սույն կարգով սահմանված սկզբունքների՝ ներառելով «Մարդու անատոմիա» առարկայի ատեստավորման գնահատականը՝ «Մարդու անատոմիա» բաղադրիչին հատկացված համամասնությամբ:

9) «Կմախքամկանային համակարգ 2» մոդուլի «Կլինիկական անատոմիա» բաղադրիչն ատեստավորվում է 50 թեստ պարունակող տարբերակով: Քննության արդյունքը միջինացվում է «Մարդու անատոմիա» առարկայի գնահատականի հետ՝ պահպանելով կանոնակարգով սահմանված համամասնությունները:

10) Ցիկլային ձևաչափով ուսումնառվող մոդուլների դեպքում կցագրված և վերականգնված ուսանողների քննության ձևաչափը քննարկում և սահմանում է մանդատային հանձնաժողովը:

11) 2025-2026 ուստարվա երկրորդ կիսամյակից մեկնարկող մոդուլային ձևաչափով ուսմնառության ընթացքում ուսանողը պետք է մոդուլում ընդգրկված յուրաքանչյուր դասընթացի (մոդուլի առարկայական բաղադրիչի) գործնական ունակությունների գնահատման համար սահմանված առավելագույն միավորից ձևավորի առնվազը 50 տոկոսը (օրինակ սահմանված առավելագույն 2.0 միավորի դեպքում՝ առնվազը 1.0 միավոր), այլապես չի թույլատրվի մոդուլի ատեստավորման: Մոդուլի բոլոր դասընթացներից յուրաքանչյուրի համար սահմանված գործնական բաղադրիչի միավորներից նվազագույն 50 տոկոս միավոր ապահովելուց հետո, հաշվարկվում է այդ մոդուլի գործնական պարապմունքների գումարային գնահատականը՝ համաձայն բանաձև 2-ի: Մոդուլի որևէ դասընթացի (առարկայից) գործնական բաղադրիչի համար սահմանված միավորների 50 տոկոսից պակաս միավոր հավաքած ուսանողը ատեստավորմանը մասնակցելու համար պետք է լրացման միջոցով մոդուլի տվյալ դասընթացի գործնական ունակություններից ապահովի սահմանված նվազագույն միավորը (գործնական բաղադրիչի առնվազն 50 տոկոսը): Լրացումն իրականացվում է տվյալ մոդուլի քննությունից հետո: Լրացման ձևաչափը որոշում է ամբիոնը: Մոդուլի՝ լրացման ենթակա առարկայի վերաբերյալ տեղեկատվությունը համապատասխան ամբիոնին տրամադրում է դեկանատը: Ամբիոնի վարիչը զեկուցագրի միջոցով դեկանատ է ներկայացնում լրացումն իրականացնելու կամ չիրականացնելու վերաբերյալ տեղեկատվությունը, մինչև 1-ին մարման ժամանակահատվածը: Իսկ մինչ այդ ժամանակահատվածը չլրացնելու դեպքում, ուսանողը չի թույլատրվում 1-ին մարման և միայն լրացնելուց հետո կարող է վերահանձնել 2-րդ մարման ընթացքում՝ կորցնելով 1-ին մարմանը մասնակցելու հնարավորությունը նույնպես: Մինչև 2-րդ մարման ժամանակահատվածը չլրացնելու դեպքում ուսանողը չի թույլատրվում 2-րդ մարմանը և հեռացվում է համալսարանից:

12) Մոդուլի յուրաքանչյուր բաղադրիչի բացակայությունները լրացվում են համաձայն սույն կարգի: Լրացման ընթացքում ուսանողը կարող է վերականգնել նաև բացակայելու ընթացքում չվաստակած գործնական ունակության միավորները:

13) Մոդուլի բաղադրիչներից մեկից առարկայական տարբերություն ունենալու դեպքում ուսանողը տվյալ բաղադրիչի քննությունը հանձնում է տվյալ առարկայից 50 հարց պարունակող տարբերակով: Երկու և ավելի բաղադրիչների առարկայական տարբերության դեպքում քննական 50 հարցը կազմվում է՝ ելնելով այդ բաղադրիչների

կրեդիտային մասնաբաժիններից: Օրինակ՝ Մոդուլ 7-ը, ունի 9.5 կրեդիտ, որի առարկայական բաղադրիչներն են՝

անատոմիա՝ 4.0 կրեդիտ (ազատված է, քանի որ նախկինում հանձնել է այդ բաժինը).

Կլինիկական անատոմիա՝ 1.5 կրեդիտ.

Հյուսվածաբանություն՝ 2.0 կրեդիտ.

Նորմալ ֆիզիոլոգիա՝ 2.0 կրեդիտ.

Քննության ենթակա բաղադրիչների գումարային կրեդիտը 5.5-է:

Քննական տոմսում յուրաքանչյուր բաղադրիչի թեստերի քանակը այս դեպքում հաշվարկվում է հետևյալ կերպ՝

Կլինիկական անատոմիա՝ $\frac{1.5 \text{ կրեդիտ}}{5.5 \text{ կրեդիտ}} \times 50 = 14$ հարց

Հյուսվածաբանություն՝ $\frac{2.0 \text{ կրեդիտ}}{5.5 \text{ կրեդիտ}} \times 50 = 18$ հարց

Նորմալ ֆիզիոլոգիա՝ $\frac{2.0 \text{ կրեդիտ}}{5.5 \text{ կրեդիտ}} \times 50 = 18$ հարց

Եթե ուսանողը մոդուլի առարկայական բաղադրիչ(ներ)ից ազատված է, ապա մոդուլի առարկայական բաղադրիչների գործնական ունակություններից ստացած գնահատականների հաշվարկը իրականացվում է՝ ըստ մոդուլում առարկայի տեսակարար կշռի՝ համաձայն բանաձև 2 -ի՝ հետևյալ կերպ.

Բաղադրիչի գործնական գնահատական $= \frac{\text{Առարկայի կրեդիտ}}{\text{Մոդուլի կրեդիտ}} \times$ Բաղադրիչի գործնականից ուսանողի ձեռքբերած միավոր

Օրինակ. մոդուլ 7- 9.5 կրեդիտ է.

Բաղադրիչներ՝ անատոմիա- 4.0 կրեդիտ՝ ազատված է:

Ստորև ներկայացված մյուս բաղադրիչների ընդհանուր կրեդիտը 5.5 է: Մոդուլում ուսանողի կողմից ձեռքբերած գործնական բաղադրիչների միավորները և ըստ բանաձևի հաշվարկված գնահատականները հետևյալն են.

Կլինիկական անատոմիա -1.5 կրեդիտ՝ 1.2 միավոր, գնահատականը՝ 0.33

Հյուսվածաբանություն -2.0 կրեդիտ՝ 1.0 միավոր, գնահատականը՝ 0.36

Նորմալ ֆիզիոլոգիա -2.0 կրեդիտ՝ 1.4 միավոր, գնահատականը՝ 0.51

Գումարվում են մոդուլի քննություն հանձնվող բաղադրիչների գործնական ունակությունների գնահատականները և ստացվում է մոդուլի գործնական ունակությունների ընդհանուր գումարային գնահատականը՝

0.33+0.36+0.51=1.20 (մոդուլի գումարային գործնական գնահատականը): Օրինակ, ուսանողը այս առարկաների (գումարային 5.5 կրեդիտ) թեստային քննության արդյունքում ճիշտ է պատասխանել 42 թեստի, ինչը համարժեք է 6.72 բալ գնահատականի (42 x 0.16): Համաձայն բանաձև 3 –ի՝ այս մոդուլի՝ գումարային 5.5 կրեդիտ կազմող առարկաների ատեստավորման գնահատականը կստացվի՝ 1.2+6.72=7.92≈8:

14) Եթե ուսանողը տվյալ մոդուլի բաղադրիչ(ներ)ից ազատված է, ապա վերջնական գնահատականը ձևավորվում է հետևյալ կերպ (ներառելով նաև ազատված առարկայական բաղադրիչ(ներ)ի գնահատականը).

Օրինակ՝ Մոդուլ 7 - 9.5 կրեդիտ է.

Դասընթացներ՝ անատոմիա-4.0 կրեդիտ-ազատված է՝ 7 գնահատականով (նախկինում ատեստավորված դասընթաց(ներ)ը կարող է գործնական բաղադրիչ ունենալ կամ չունենալ. ունենալու դեպքում՝ գործնական բաղադրիչ(ներ)ը ևս ներառված է այդ դասընթաց(ներ)ի վերջնական գնահատականի մեջ, ինչպես ընթացիկ ուսումնառվող դասընթացների դեպքում:

Ստորև ներկայացված մյուս բաղադրիչների ընդհանուր 5.5 կրեդիտը ատեստավորվել է 8 գնահատականով(ներառյալ գործնականի գնահատականը).

Կլինիկական անատոմիա՝ 1.5 կրեդիտ

Հյուսվածաբանություն՝ 2.0 կրեդիտ

Նորմալ ֆիզիոլոգիա՝ 2.0 կրեդիտ:

Այս մոդուլի վերջնական գնահատականը՝ 9.5 գումարային կրեդիտ կազմող դասընթացների համար ձևավորվում է հետևյալ կերպ.

ԲԱՆԱՁԵՎ 4՝

Մոդուլի վերջնական գնահատականը

$$= \Sigma\left(\frac{\text{ուսումնառող դասընթաց(ներ)ի կրեդիտ}}{\text{մոդուլի կրեդիտ}} \times (\text{ուսումնառող դասընթաց(ներ)ի վերջնական գնահատական})\right)$$

$$+ \Sigma\left(\frac{\text{ազատված դասընթաց(ներ)ի կրեդիտ}}{\text{մոդուլի կրեդիտ}} \times \text{ազատված դասընթաց(ներ)ի վերջնական գնահատական}\right)$$

Մոդուլի վերջնական գնահատականը = $\frac{5.5}{9.5} \times 8 + \frac{4}{9.5} \times 7 = 7.58 \approx 8$

15) Միջին մասնագիտական կրթության «Քույրական գործ» մասնագիտությամբ բարձր առաջադիմությամբ շրջանավարտին ընդհանուր բժշկության ֆակուլտետ ժամանակավոր հրամանագրված ուսանողի կարգավիճակում՝ «Կլինիկական անատոմիա» առարկայական տարբերությունը ատեստավորվում է 1 քննությամբ՝ 50 հարցով, գնահատականը համարվում է վերջնական:

16) Սույն կարգով չնախատեսված դեպքերը կքննարկվեն համալսարանի մանդատային հանձնաժողովի նիստում:

5. ***Քննությունների և ստուգարքների թեստային տարբերակների կառուցվածքը***

Քննությունների և ստուգարքների համար կիրառվող թեստային տարբերակների համար սահմանվում է հետևյալ կառուցվածքը՝

1) Քննական տարբերակները պետք է կազմվեն Համալսարանի կողմից տրամադրված համակարգչային ծրագրով:

2) Մինչև 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական պլանով նախատեսված առարկաների ատեստավորման, ակադեմիական պարտքերի, առարկայական տարբերությունների, ինչպես նաև մինչ նշված ժամկետը ձևավորված առավելագույնը 12 կրեդիտ կազմող առարկայական պարտքերի վերահանձնման թեստային տարբերակի հարցադրումների 50 տոկոսը (25 թեստ) պետք է լինի 1 պատասխանով, որի կեսը պետք է ունենա մեկ ճիշտ, իսկ մյուս կեսը՝ մեկ սխալ պատասխան:

3) 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակից սկսած թեստային տարբերակի հարցադրումներից 25-ը (50 տոկոս) պետք է լինի 1 պատասխանով, որից 20-ը պետք է ունենա մեկ ճիշտ, իսկ 5-ը՝ մեկ սխալ պատասխան:

4) Տարբերակի թեստային հարցադրումներից մյուս 25-ը (50 տոկոս) պետք է լինի բանալիով, որտեղ տառային պատասխանները պետք է պարունակեն առնվազն երկու թիվ:

5) Տեստերի երկու տեսակի դեպքում էլ առաջարկվող պատասխանների թիվը պետք է լինի 4:

6) Մեկ պատասխանով թեստերի դեպքում պատասխանների տարբերակները դրվում են տառերի, իսկ բանալիով թեստերի դեպքում՝ թվերի տեսքով (ուսանողի

կողմից տրված պատասխանները միայն տառերի տեսքով լինելու նպատակով):

7) Առարկայի բնույթից ելնելով՝ իրավիճակային, հաշվարկային և նկարագրական (միկրո կամ մակրոպատրաստուկներ) թեստերը քննական տարբերակներում պետք է լինեն 2-ից 5-ը:

8) Տարբերակներում թեստերի բաշխումն ըստ թեմաների որոշվում է՝ ելնելով տվյալ առարկայի ուսումնական ծրագրում դրանց մասնաբաժնից:

9) Տարբերակներում թեստերի բովանդակությունը պետք է համապատասխանի հարցաշարին, իսկ վերջինս՝ ուսումնական ծրագրին:

10) Յուրաքանչյուր տարբերակում ինքնուրույն աշխատանքների վերաբերյալ թեստային հարցադրումների քանակը չպետք է գերազանցի ընդհանուր քանակի 15 տոկոսը:

6. ***Գիտելիքների ստուգման առանձնակի պայմաններ***

1) Ցիկլային բազմաբաղադրիչ ձևաչափով դասավանդվող ու գնահատվող դասընթացների վերջնական գնահատականը ձևավորվում է բաղադրիչների գնահատականների (միավորների) գումարից: Ստացված արդյունքն ամբողջացվում է:

2) Բազմաբաղադրիչ ձևաչափով դասավանդվող ու գնահատվող դասընթացների քննությունից անբավարար գնահատական ստանալու դեպքում բաղադրիչների գնահատականները (միավորները) չեն գումարվում և ուսանողին նշանակվում է քննության անբավարար գնահատական: Մարման շրջանում գործնական բաղադրիչ(ներ)ի միավոր(ներ)ը պահպանվում են:

3) Մինչև 2017-2018 ուստարին ձևավորված ակադեմիական պարտքերը և առավելագույնը 12 կրեդիտ կազմող առարկայական պարտքերն ատեստավորվում և գնահատվում են համաձայն Համալսարանի ուսումնական աշխատանքերի գծով պրոռեկտորի 2015 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 02-36/126 կարգադրության:

4) Քննությունների և ստուգարքների ժամանակ օգտագործվում է 2 և ավելի քննական տարբերակ:

5) Համալսարանում դասավանդվող՝ հասարակագիտական առարկաների, «Հայոց լեզու», «Օտար լեզու», «Քաղաքացիական պաշտպանություն» առարկաների (դասընթացների) ատեստավորումների դեպքերում ուսանողն ատեստավորվում է 2-ից 3 դրական պատասխանի (շաբաթական 1 մուտքի դեպքում՝ 3, երկու շաբաթվա ընթացքում 1 մուտքի դեպքում՝ 2 պատասխանի) հիման վրա: Անհրաժեշտ թվով դրական պատասխանների բացակայության դեպքում առարկան ատեստավորվում է մարման

շրջան(ներ)ում՝ գրավոր թեստային եղանակով:

Սույն կետով նշված առարկաները միմյանց, այլ առարկայի կամ առարկաների հետ մեկ մոդուլում ընդգրկված լինելու դեպքում դիտարկվում են բոլոր առարկաների դրական արդյունքները, որպես մեկ վերջնական ընդհանրական արդյունք՝ պահպանելով մոդուլների ձևավորման, դասավանդման և ատեստավորման տրամաբանությունը: Ստուգարքային մոդուլների ընդհանրական ատեստավորման մեխանիզմը (գրավոր, բանավոր...) որոշվում է ԵՊԲՀ մանդատային հանձնաժողովի կողմից: Ստուգարքի ելքը որոշող գնահատականը՝ թեստային տարբերակով մոդուլի ընդհանրական ատեստավորման դեպքում հաշվարկվում է՝ համաձայն բանաձև 3-ի:

Ստուգարքային մոդուլի անբավարար ելքի դեպքում (անկախ առանձին դասընթացների արդյունքներից) այդ մոդուլի ընդհանրական ստուգարքային վերահանձնումը կազմակերպվում է մարման շրջանում՝ ատեստավորման գործընթացում բոլոր բաղադրիչների ընդգրկմամբ:

7. ***Գրավոր թեստային աշխատանքների ստուգման պահանջները***

Գրավոր (թղթային) թեստային աշխատանքների ստուգումը կատարվում է հետևյալ պահանջներին համապատասխան՝

1) Բոլոր ամբիոններում օգտագործվող ստուգման թերթիկները պետք է լինեն միատեսակ՝ հաստատված Համալսարանի Ուսումնամեթոդական խորհրդի կողմից:

2) Աշխատանքները միաժամանակ պետք է ստուգվեն երկու դասախոսի կողմից:

3) Աշխատանքը ստուգող դասախոսները ստուգման թերթիկի համապատասխան տեղում գրում են իրենց անուն, ազգանունները և ստորագրում:

4) Ստուգող դասախոսը ուսանողի կողմից ստուգման թերթիկում նշված տառի դիմաց ճիշտ պատասխանի դեպքում գրառում է + (պլյուս) նշանը, իսկ սխալի և չպատասխանվածի դեպքերում՝ = (հավասար) նշանը:

5) Ուսանողի կողմից հարցի պատասխանի ուղղումը համարվում է սխալ պատասխան:

8. ***Փոխատեղման ընդհանուր պայմանները***

1) Ուսման վարձի լրիվ փոխհատուցման նպաստի համակարգում ընդգրկվելու համար (վճարովի համակարգից անվճար համակարգ անցնելը և հակառակը (փոխատեղում))՝ ուսանողը պարտավոր է ուսումնական ծրագրով սահմանված ստուգարքները և քննությունները հանձնել միայն քննաշրջանի ընթացքում:

2) Մարման շրջաններում ստուգարքներ և քննություններ հանձնած ուսանողը չի

մասնակցում ուսման վարձի լրիվ փոխհատուցման նպաստի մրցույթին:

3) Եթե ուսանողը քննաշրջանում չի մասնակցել քննությանը կամ ստուգարքը հանձնել է մարման շրջաններում, կարող է՝ դիմում ներկայացնելու դեպքում, մասնակցել փոխատեղման մրցույթին, հետևյալ առանձնահատուկ դեպքերում (հարգելի բացակայություններ)՝

ա. Բարձր վարակելիության ինդեքս ունեցող հիվանդություններ (ջրծաղիկ, կարմրուկ, կարմրախտ, ինֆեկցիոն հեպատիտ, համաճարակային պարոտիտ, քութեշ, ինֆեկցիոն մոնոնուկլեոզ, բրուցելիոզ, կորոնավիրուսային վարակ).

բ. Սուր աղիքային վարակներ (դիզենտերիա, սալմոնելյոզ).

գ. Սոմատիկ ծանր պաթոլոգիաներ, որոնք պահանջում են 7 և ավելի օր տևողությամբ բուժում.

դ. Կենսական ցուցումներով կատարվող վիրահատություններ.

ե. Ծննդաբերություն (5 օր)՝ ցիկլային ձևաչափով ուսումնառության դեպքում.

զ. Ամուսնություն (5 օր)՝ ցիկլային ձևաչափով ուսումնառության դեպքում.

Է. Ծանուցագրով՝ Պաշտպանության նախարարության ստորաբաժանում կամ դատարան կամ այլ իրավապահ մարմին ներկայանալու մասին հիմնավոր փաստ.

ը. Ուսանողի՝ արտակարգ իրավիճակում հայտնվելու կամ մերձավոր ազգականի հետ դժբախտ պատահարի դեպքում:

Վերոնշյալ բոլոր դեպքերում համապատասխան փաստաթղթերը կցվում են ռեկտորին հասցեագրված դիմումին:

Բժշկական հաստատության կողմից ներկայացվող փաստաթուղթը պետք է ստորագրված լինի բժշկական հաստատության տնօրենի կողմից և հաստատված՝ բժշկական հաստատության ՀՎՀՀ-ն պարունակող կլոր կնիքով:

Դիմումները քննարկվում են Մանդատային հանձնաժողովի նիստում և ուսանողի ուսման վարձի փոխհատուցմամբ փոխատեղման մրցույթին մասնակցելու հարցի մասին Մանդատային հանձնաժողովն ընդունում է որոշում:

Բացակայությունների վերոնշյալ բոլոր դեպքերը վերաբերում են 1-ից 3-րդ կուրսերում մոդուլային/բազմաբաղադրիչ ձևաչափով դասավանդվող առարկաների, ինչպես նաև 4-րդ և 6-րդ կուրսերում ցիկլային ձևաչափով դասավանդվող մոդուլային/բազմաբաղադրիչ ձևաչափով դասավանդվող առարկաների յուրաքանչյուր բաղադրիչի գործնական ունակության բացակայությանը, ինչպես նաև քննություններից և գիտելիքների ստուգման բոլոր գործընթացներից բացակայություններին:

Ուսումնական տարվա ընթացքում ցիկլային ձևաչափով ուսումնառվող առարկաների դասընթացներից պարբերաբար ՀՀ Պաշտպանության նախարարության ստորաբաժանումներ ներկայանալու հիմքով բացակայություններ ունեցող ուսանողների /«Պատիվ ունեմ» ծրագրի և զինվորական վարժանքների մասնակից, ինչպես նաև պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչման ենթակա ուսանողներ/ բաց թողնված դասընթացները հնարավորության սահմաններում լրացումները կազմակերպվում են ցիկլի ընթացքում հակառակ հերթով և թույլատրվում է մասնակցել ատեստավորմանը ցիկլի ավարտին: Միայն ատեստավորման օրը բացակայելու դեպքում ատեստավորումը կազմակերպվում է այլ օր, կամ թույլատրվում է լրացնել կիսամյակի ընթացքում այլ խմբի հետ կիսամյակային ուսումնառության հակառակ հերթով և ատեստավորումը հանձնել տվյալ խմբի ցիկլի ավարտին:

Լրացման ենթակա յուրաքանչյուր կարգավիճակի համար ուսանողը պետք է ներկայացնի համապատասխան դիմում՝ կցելով ՀՀ Պաշտպանության նախարարության ստորաբաժանման համապատասխան փաստաթուղթը, բացակայությունների լրացման և ատեստավորման գործընթացը կազմակերպելու համար:

9. ***Ընթացակարգային այլ պայմաններ***

1) Ստուգարքների և քննությունների արդյունքներին ուսանողները տեղեկանում են նույն օրը՝ ստուգարքների կամ քննությունների ավարտից հետո ողջամիտ ժամկետում:

2) Ամբիոնները ուսանողներին պետք է ծանոթացնեն ստուգարքների և քննությունների ժամանակ օգտագործվող թեստերի նույնատիպ օրինակներին:

3) Սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված հարգելի համարվող հանգամանքները և փաստաթղթերին ներկայացվող պահանջները տարածվում են նաև ուսանողի ցիկլային ձևաչափով անցկացվող ուսումնական գործընթացից, ընթացիկ քննություններից, ստուգարքներից և բազմաբաղադրիչ ձևաչափով ուսումնասիրվող առարկաների հարցումներից բացակայությունները հարգելի գնահատելու դեպքերի վրա:

4) Էլեկտրոնային համալսարանում ուսանողի բացակայության, ինչպես նաև ընթացիկ ատեստավորման ուղղումների վերաբերյալ ամբիոնի վարիչի զեկուցագիրը և դասախոսի բացատրագիրը ներկայացնել սխալ գրանցման պահից՝ 1-ից 3-րդ կուրսերի դեպքում 3 օրվա, իսկ 4-ից 6-րդ կուրսերի դեպքում՝ 1 օրվա ընթացքում:

5) Ուսանողների պարտավոր են դասերի և տարբեր ձևաչափերի գիտելիքների ստուգման գործընթացների մեկնարկին չուշանալ:

Հոդված 7. Գիտելիքների ստուգման գործընթացում ուսանողի ինքնազգացողության հետ կապված հարցերը

1. Ստուգարքի կամ քննության ընթացքում ուսանողի ինքազգացողության վատացման դեպքում ուսանողը պարտավոր է դիմել քննասենյակում գտնվող քննության պատասխանատուին՝ առաջին և (կամ) բժշկական օգնություն ստանալու և (կամ) քննությունը դադարեցնելու հարցով:

2. Քննության պատասխանատուն պարտավոր է հրավիրել Համալսարանի բուժկետի պատասխանատու բժշկին և (կամ) բուժքրոջը և կասեցնել ստուգարքի կամ քննության սահմանված ժամանակի ընթացքը՝ ամրագրելով մինչև կասեցումը ուսանողի կողմից օգտագործված ժամաքանակը և քննության արդյունքները:

3. Բուժկետի պատասխանատուն, առաջին օգնությունը ցուցաբերելուց հետո, ներկայացնում է կարծիք՝ գիտելիքների ստուգման գործընթացին ուսանողի մասնակցությունը շարունակելու հնարավորության կամ անհնարինության մասին:

4. Գիտելիքների ստուգման գործընթացին ուսանողի մասնակցությունը շարունակելու հնարավորության դեպքում կասեցված ստուգարքի կամ քննության սահմանված ժամանակի ընթացքը վերականգնվում է:

5. Գիտելիքների ստուգման գործընթացին ուսանողի մասնակցությունը շարունակելու անհնարինության դեպքում՝ կասեցված ստուգարքի կամ քննության դրական ելքով արդյունքներն ընդունվում են ուսանողի գրավոր համաձայնության դեպքում, իսկ քննության բացասական ելքի դեպքում կազմվում է արձանագրություն և Մանդատային հանձնաժողովի որոշմամբ նշանակվում է քննության նոր օր:

6. Սույն հոդվածով նշված ընթացքն արձանագրվում է, որը ստորագրում են ուսանողի գիտելիքների ստուգման գործընթացի առնվազն երկու պատասխանատու, բուժկետի պատասխանատուն(երը) և ուսանողը:

7. Սույն հոդվածով սահմանված կանոնների խախտմամբ գիտելիքների ստուգման գործընթացից բացակայելու դեպքերում քննության կամ ստուգարքի արդյունքները գնահատվում են որպես բացասական:

Հոդված 8. Տեխնիկական և այլ միջոցներից օգտվելու սահմանափակումները

1. Դասընթացի և գիտելիքների ստուգման գործընթացի ժամանակ ուսանողը չի կարող օգտվել հեռախոսից, տեխնիկական և (կամ) տվյալների փոխանցման այլ միջոց(ներ)ից:

2. Գիտելիքների ստուգման գործընթացին մասնակցող ուսանողի փոխարեն այլ ուսանողի կամ ուսանող չհանդիսացող այլ անձի մասնակցությունն արգելված է:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված կանոնների խախտմամբ գիտելիքների ստուգման գործընթացին մասնակցելու դեպքերում քննության կամ ստուգարքի արդյունքները համարվում են բացասական գնահատված և ուսանողի վարքագիծը ենթակա է ուսումնասիրման և պատասխանատվության միջոցի կիրառման՝ «ԵՊԲՀ սովորողների ներքին կարգապահական» կանոնակարգով սահմանված կարգով:

Հոդված 9. Գիտելիքների ստուգման արդյունքների բողոքարկումը

1. Գիտելիքների ստուգման գործընթացում գրավոր ատեստավորման արդյունքների հետ անհամաձայնության դեպքում ուսանողը կարող է ատեստավորման արդյունքները բողոքարկել:

2. Համակարգչային եղանակով ատեստավորման դեպքում բողոքարկող ուսանողը համապատասխան ֆակուլտետի դեկանատի կողմից տրամադրված թղթի վրա նշում է բողոքարկման նպատակով ընտրված թեստերի համարները (1-ից 5 թեստ), մոդուլային ձևաչափով ատեստավորման դեպքում՝ նաև բողոքարկվող դասընթաց(ներ)ի անվանումը: Բողոքարկման թերթիկը ներկայացնում է քննասենյակի պատասխանատուին, մինչև քննասենյակից դուրս գալը: Քննությունների և տարբերակված ստուգարքների բողոքարկումը կատարվում է համակարգչային լսարանում՝ ուսանողի, համապատասխան ամբիոնի վարիչի կամ թեստերի պատասխանատուի, դեկանի կամ փոխդեկանի պարտադիր մասնակցությամբ: Գրավոր թղթային տարբերակով իրականացվող ատեստավորումների բողոքարկումն իրականացվում է համաձայն սույն կանոնակարգի:

3. Բողոքարկման արդյունքում կայացվում է հետևյալ որոշումներից որևէ մեկը.

1) բողոքարկող ուսանողի գնահատականը թողնել անփոփոխ,

2) բողոքարկող ուսանողի գնահատականը բարձրացնել:

Բողոքարկման արդյունքում ընդունված որոշման հետ ուսանողի չհամաձայնվելու դեպքում ուսանողն իրավունք ունի բողոքարկել այդ որոշումը՝ մասնակցելով կրկնակի բողոքարկման: Կրկնակի բողոքարկումն իրականացվում է նույն կամ հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի, դեկանի կամ փոխդեկանի, ամբիոնի պատասխանատուի, բողոքարկող ուսանողի և անհրաժեշտության դեպքում՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի

հրավերով համապատասխան ոլորտի այլ մասնագետի մասնակցությամբ:

4. Կրկնակի բողոքարկման արդյունքում կայացվում է հետևյալ որոշումներից որևէ մեկը.

1) բողոքարկող ուսանողի գնահատականը թողնել անփոփոխ,

2) բողոքարկող ուսանողի գնահատականը բարձրացնել:

5. Բողոքարկման կամ կրկնակի բողոքարկման արդյունքում թեստավորման գնահատականը բարձրացնելու մասին որոշումը տարածվում է միայն այդ թեստ(եր)ը բողոքարկած ուսանողի գնահատականին:

Գրավոր ատեստավորման արդյունքների բողոքարկման կամ կրկնակի բողոքարկման մասին ընդունված որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են համապատասխան ֆակուլտետի դեկանատի ներկայացուցիչ(ներ)ը, ամբիոնի դասախոսները և բողոքարկող ուսանողը: Արձանագրությունը կցվում է քննական տեղեկագրին:

Բողոքարկման բավարարման դեպքում համապատասխան ամբիոնի վարիչը կազմակերպում է թեստավորման բազայի համապատասխան թեստի շտկում:

6. Բանավոր քննության բողոքարկումը կարող է իրականացվել ուսանողի գիտելիքների ստուգման ավարտին՝ նույն քննասենյակում ուսանողի գնահատականը հայտնելուց անմիջապես հետո՝ քննող դասախոս(ներ)ի և ամբիոնի վարիչի ներկայությամբ: Բողոքարկումն իրականացվում է ուսանողի կողմից ներկայացված հարց(եր)ի շրջանակներում: Բողոքարկման հարց(եր)ի մասին ամբիոնի վարիչը ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը.

1) բողոքարկող ուսանողի գնահատականը թողնել անփոփոխ,

2) բողոքարկող ուսանողի գնահատականը բարձրացնել:

Բանավոր ատեստավորման արդյունքների բողոքարկման մասին ընդունված որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են ամբիոնի վարիչը, ամբիոնի դասախոս(ներ)ը և բողոքարկող ուսանողը:

* * *